

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԸՆԹԵՐ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒՄՈՒՄ ԴՆԵՐԱԿԱՆՈՒՄՈՒՄ, ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒՄՈՒՄ ԴՆԵՐԱԿԱՆՈՒՄՈՒՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության

նախարարության կողմից

13 փետրվարի 2007 թ.

Պետական գրանցման թիվ 60607060

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1 փետրվարի 2007 թ.
ք. Երևան

N 27-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԸՆԹԵՐ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒՄՈՒՄ ԴՆԵՐԱԿԱՆՈՒՄՈՒՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Համապետական յուրաքանչյուր ընտրություն նշանակելու օրվանից Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին առընթեր ստեղծել վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն:

(1-ին կետը խմբ. 09.11.07 N 161-Ն)

2. Սահմանել վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կազմավորման և գործունեության կարգը (Հավելված 1):

3. Ուժը կորցրած ճանաչել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2003 թ. մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին առընթեր վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեության կարգը սահմանելու մասին» N 47-Ն որոշումը:

ՀՀ կենտրոնական ընտրական
հանձնաժողովի նախագահ՝

Գ. Ազարյան

Հավելված 1

ՀՀ կենտրոնական ընտրական
հանձնաժողովի 2007 թ. փետրվարի 1-ի
թիվ 27-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒՄՈՒՄ ԴՆԵՐԱԿԱՆՈՒՄՈՒՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին առընթեր վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում, սույն կարգի համաձայն վերահսկողություն է իրականացնում համապետական ընտրությունների կազմակերպման և անցկացման համար ընտրական հանձնաժողովներին տրամադրված միջոցների նպատակային օգտագործման, ինչպես նաև նախընտրական հիմնադրամներ (այսուհետ՝ հիմնադրամ)

կատարվող մոծումների, դրանց հաշվարկման և ծախսերի վրա:

2. Ծառայությունը ստեղծվում է համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից:

3. Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ ընտրական օրենսգրքով, սույն կարգով և իրավական այլ ակտերով: Ծառայությունը հաշվետու է կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

4. Ծառայությունն իր աշխատանքները իրականացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ համագործակցված:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

5. Ծառայության կազմում պայմանագրային հիմունքներով ընդգրկվում են՝

ա) ծառայության ղեկավարը,

բ) ծառայության մինչև 3 աշխատակից:

Ծառայության ղեկավարին ներկայացվող պահանջներն են՝ բարձրագույն կրթություն և պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ հայեցողական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ գիտական աստիճան տնտեսագիտության ոլորտում:

Ծառայության աշխատակցին ներկայացվող պահանջներն են՝ բարձրագույն կրթություն և համակարգչով ու ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

6. Ծառայության կազմը սահմանվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ:

7. Ծառայության ղեկավարը յուրաքանչյուր ամսվա համար վարձատրվում է նվազագույն աշխատավարձի քառապատիկի չափով, իսկ ծառայության աշխատակիցը՝ նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

Ծառայության կազմում ընդգրկված մասնագետները ծառայության գործունեության ամբողջ ժամանակահատվածում ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից: Ծառայության մասնագետների աշխատավարձը նրանց հիմնական աշխատավայրերում պահպանվում է:

(7-ին կետը փոփ. 09.11.07 N 161-Ն)

8. Ծառայության գործունեությունն ավարտվում է ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից հետո՝ 45-րդ օրը:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

9. Ծառայության աշխատանքները ղեկավարում է ծառայության ղեկավարը:

10. Ծառայությունը.

ա) վերահսկողություն է իրականացնում համապետական ընտրությունների կազմակերպման և անցկացման համար ընտրական հանձնաժողովներին տրամադրված միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ,

բ) վերահսկողություն է իրականացնում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարվող մոծումների, դրանց հաշվարկման և ծախսերի նկատմամբ,

գ) թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների գումարների ծախսման վերաբերյալ հայտարարագրերը ստանալուց հետո՝ 20 օրվա ընթացքում, ստուգում և նյութերը ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը,

դ) ուսումնասիրում և եզրակացություն է ներկայացնում ընտրությունների անցկացման համար հատկացված գումարների, թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների գումարների ծախսման վերաբերյալ ստացված դիմում-բողոքների մասին:

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Ծառայությունը իրավունք ունի.

ա) ուսումնասիրել ընտրական հանձնաժողովներում առկա ֆինանսական փաստաթղթերը.

բ) անհրաժեշտության դեպքում նախընտրական հիմնադրամներ ձևավորելու համար ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ բացած բանկերից պահանջել համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարվող մոծումների և ծախսերի վերաբերյալ.

գ) իր գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ նախապատրաստել որոշումների նախագծեր և

առաջարկել դրանք ներկայացնել կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը.

դ) մասնակցել կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների ընթացքում ֆինանսական ապահովման նպատակով իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման աշխատանքներին:

12. Ծառայությունն իր գործառույթներն իրականացնելիս վարում է գործավարություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

13. Ծառայության գործունեության ֆինանսական և նյութատեխնիկական ապահովումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: